

ՆԱՄԱԿՆԵՐ

Մասնաւոր հաճոյքով հրատարակութեան կու տանք Հ. Բ. Ը. Միւլ-թեան Փոխ-Նախագահ եւ Ամերիկահայ ծանօթ ու սիրուած բարերար Մեծ. Տիար Տէքթ. Վարդգէս Մկրտիչեանի դեղեցիկ նամակը՝ ուղղուած Ս. Աթոռիս Դիւանապետ եւ Դպրեմանքի Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանին: Անկասկած ենք որ մեր ընթերցողները եւս մեղի հետ համաժիտ պիտի դռնը-ւին երուսաղէմի Հայ Պատրիարքութեան դերին եւ ընդհանրապէս մեր ժողովուրդին ու հայրենիքին մասին Մեծայարգ բարերարին յայտնած այնքան ճիշդ ու մեկին զազափարներուն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 28, 1971

Կրիմուիչ, Փրնէքթիքը

Գերազնոր

Շահէ Եպս. Աճէմեան

Տեսուչ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի

Սիրելի Շահէ Եպիսկոպոս,

Իբր Հոկտ. 14 թուակիր գրութիւնդ ստացած եմ: Ես ալ շատ ուրախ եղայ քեզ տեսնելու Բարեգործականի ժողովին, գոնէ մէկ երկու խօսք վա-խանակելու քեզ հետ:

Ժառանգաւորաց Վարժարանի ուսանողի մը համար իմ յանձն առած իրաւաբանական անձնապէս իմ կողմէ չպիտի վճարուի, այլ պիտի գայ «Մկրտիչեան Երմանդատ»-ի եկամուտէն. ան կը վճարուի տարուէ տարի, երբ ժա-մանակը գայ, Բարեգործականի կողմէ՝ երբ Բարեգործականի յանձն առած վնասումները կը կատարուին: Պրն. Ֆէնսեանը այդ մասին տեղեկութիւն ըս-տացած է: Վնասումը արդէն կատարուած է այս տարուան համար:

Ես ուրախ եմ այս առիթը ունենալու քեզ յայտնելու համար կարգ մը մտածումներ, մեր ազգային կեանքին շուրջ:

Ամէն հայ պէտք է լաւ ըմբռնէ առաջնակարգ կարեւորութիւնը Հայ Երեսօղակի, Սիկիւֆահայ կեանքին մէջ, եւ մանաւանդ համագայիւն տե-սակէտէ:

Ես մեծապէս հրճուեցայ երբ Պրն. Ալեք Մանուկեան քրաւ այն հըս-կայական ճակատադէպերը որ կարելի դարձուց Երեսօղակի մէջ կառու-ցանել առաջնակարգ արդիական շէնք մը, Հիւսիսային համար: Պրն. Մանուկ-եան շատ լաւ գիտէ Երեսօղակի կարեւորութիւնը մեր ազգային կեանքին մէջ, եւ Երեսօղակի Միաբանութեան ամբողջական ճակատմը ազգային ծա-ռայութեան:

Գործը որ կայ այդ Միաբանութեան առջեւ, իրապէս հսկայական է եւ չափազանց դժուարին. բայց կարող ձեռքբերու մէջ է գործը, եւ համայն ազգը պէտք է ամբողջական վստահութիւն ունենայ այդ մասին: Անհամբը-րութիւն, սրտնեղութիւն, անտեղի բարկութիւն պէտք է չտեղ գտնեն մեր մտքերում եւ սրտերում մէջ: Անտեղի, անհիմն քննադատութիւններ, որոնք յաճախ կը լսուին, ո՛չ միայն որեւէ օգտակարութիւն չունին, այլ քանակաւ ու-ժեր են: Ըսի-ըսանքներու կարեւորութիւն տուողներ, եւ իրենց եւ ուրիշներու անհիմն քննադատութիւնները իբր հաստատուած իրողութիւն նկատողները շատ շատ են մեր մէջ, որոնք կը կանգնին իբր խոր ազգասէրներ ու ազգային

շահերու պաշտպաններ, երբ անոնցմէ շատ շատերը ամենափոքր գոհողութիւնը չեն ըրած ազգին ի հաշիւ:

Երուսաղէմը ո՛չ միայն նշանակութիւն ունի Հայոց համար, այլ միջազգային տեսակէտէն ունի ամենամեծ կարեւորութիւն: Հոգեկան կեդրոն է երեք մեծ կրօններու, բայց հոգեկանը գործնականին սկիզբ դնողն է, եւ այդ լաւ կ'ըմբռնէ համայն մարդկութիւնը:

Մեզ, Հայոցս համար, անհուն բարեբախտութիւն է ունենալ Երուսաղէմի Սրբազան Պատրիարքին նման, եւ քեզ նման խորաթափանց միտք ունեցող կղերականներ, որոնք արդէն կարեւոր դեր են կատարած մեր ազգային մարզին մէջ — առանց որ այդ մասին երբեք լսուի—, եւ սահմանուած են նոյն իսկ աւելի կարեւոր դեր կատարելու:

Հայը անսասնօրէն կը կանգնի արդարութեան եւ մարդկային ազատութեան սկզբունքներուն վրայ: Հայ տարրը, ամենուրեք, անշահախնդիր կեցումով ունի եւ իր ուժը կը տրամադրէ արդարութեան եւ ազատութեան սկզբունքներու յաղթանակին: Ո՛չ մէկ համայնք, ո՛չ մէկ կառավարութիւն պատճառ ունի Հայուն նայելու իբր անվստահելի տարր: Ո՛չ մէկ վայր Հայը սրտոնաւ տուած է — փոքր, աննշան հատուածներու մոլորած, աննշան գործունէութիւններէն զատ—, որ «ծուռ աշխով» նայուի իրեն:

Ահագանգը հնչած է արդէն այսօր, երբ մեծ Հայերս, միաբերան ազատութեան եւ արդարութեան անուամբ խօսինք — ազատութիւն եւ արդարութիւն բոլորին, ամէն համայնքներու, ամէն ազգերու, ամէն ցեղերու:

Կատարելուած «Հայաստան»ը կայ, հազիւ մէկ—տասներորդը պատմական Հայաստանի՛ն, քէն սիրտն իսկ մեր մայր երկրին, իր անառիկ լեռներով եւ Ղարապաղիներու նման համայնքներով, որոնք երբեք չեն նըստած եւ ստրկացուած մեր պատմութեան ամբողջ ընթացքին: Թող համայնքն աշխարհ նայի՛ այդ հողամասին, եւ խորհի՛. . . : Թող տեսնենք որ այս ցեղը լեռներուն լանջերը մաքրելով այժմ իրեն տրամադրուած հսկայ գործիքներով, այդ լանջերը մաքրել է քարերէ ու ժայռերէ եւ բերքատու դաշտերու վերածել է, զանոնք Հայաստանի անմրցելի ռոգական սիւստեմով ջրելով: Թող նային եւ տեսնեն քէն մարտարարութեամբ, իր ամէն ճիւղներուն մէջ, ի՛նչ յառաջխաղացք կատարած է, եւ ինչպէ՛ս է որ մեր մարտարարութեան տալակեղծութեամբ իրագործուած է: Թող նային եւ տեսնեն քէն քաղաքաշինութիւնը ինչպէ՛ս պէտք է ծրագրուի եւ իրագործուի: Թող նային ու գարմա՛նան. . . :

Թող նային եւ տեսնեն քէն մշակոյթը ի՛նչ ձև է առած, դաստիարակութիւնը ի՛նչ տարածում է առնած — տեսնեն որ ամբողջ ժողովուրդ մը շարժման մէջ է, *mobilized*, յառաջդիմութեան ի սէր, մարդկայնութեան ի սէր: Եւ միջազգային ուժերը, որ համաշխարհային ուղղութիւն կու տան, քո՛ղ մարայ բանան այդ բոլորովին տարօրինակ, մարդկայնութեան զգին ցուցնող ցեղին, որ լիովին կատարել իրեն սահմանուած գերը՝ որ է Մերձատր Արեւելի մշակութային լուստարումը, վերելքը եւ տնտեսական բարեփառումը եւ յառաջխաղացքը:

Ձերմագին բարեկեցութեամբ, ու առողջութեամբ եւ յաջողութեամբ մաղթանքներս, խնդրելով ձեր եւ Սրբազան Պատրիարքին օրհնութիւնը,

Ձերպ

ՎԱՐԴԳԷՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ

51 Connecticut Avenue
Greenwich, Conn. 06830
U. S. A.